

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. ապրիլի 11-17-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Ապրիլի 13-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ, լեռնային շրջաններում ձյան տեսքով: Տեղումների քանակը կազմել 3-8մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը ապրիլի 11-12-ին եղել է նորմայից բարձր 3-6 աստիճանով, ապրիլի 13-15-ին եղել է նորմայից ցածր 4-8 աստիճանով, ապրիլի 16-17-ին նորմայի սահմաններում դրական և բացասական շեղումներով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է՝ Սյունիքի հովիտներում՝  $+30...+32^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $+22...+24^{\circ}\text{C}$ , Արմավիրում, Արարատում՝  $+24...+27^{\circ}\text{C}$ , Վայոց ձորի նախալեռներում՝  $+26^{\circ}\text{C}$ , լեռներում՝  $+16^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $+22...+24^{\circ}\text{C}$ , Լոռիում՝  $+18...+22^{\circ}\text{C}$ , Արագածոտնի նախալեռներում՝  $+17...+22^{\circ}\text{C}$ , լեռներում՝  $+13...+15^{\circ}\text{C}$ , Կոտայքի նախալեռներում՝  $+20^{\circ}\text{C}$ , լեռներում՝  $+14...+20^{\circ}\text{C}$ , Գեղարքունիքում՝  $+15...+19^{\circ}\text{C}$ , Շիրակում՝  $+12...+16^{\circ}\text{C}$  (Գյումրի՝  $+18^{\circ}\text{C}$ ), Երևանում՝  $+23...+24^{\circ}\text{C}$ :

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է՝ Շիրակում  $-10...-14^{\circ}\text{C}$  (Աշոցք՝  $-16^{\circ}\text{C}$ ), Արագածոտնի լեռներում՝  $-7...-10^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $-2...-4^{\circ}\text{C}$ , Լոռիում՝  $-6...-10^{\circ}\text{C}$  (Տաշիր՝  $-12^{\circ}\text{C}$ ), Գեղարքունիքում՝  $-3...-7^{\circ}\text{C}$  (Սեմյոնովկա՝  $-9^{\circ}\text{C}$ ), Կոտայքի լեռներում՝  $-6^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $-4^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $0...-6^{\circ}\text{C}$ , Վայոց ձորի լեռներում՝  $-5^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $0^{\circ}\text{C}$ , Սյունիքի հովիտներում՝  $+4^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $0...-5^{\circ}\text{C}$ , Արարատում՝  $0...-1^{\circ}\text{C}$ , Արմավիրում՝  $-2^{\circ}\text{C}$ , Երևանում՝  $-1...-3^{\circ}\text{C}$ :

Ապրիլի 11-12-ին շրջանների զգալի մասում դիտվել է քամու ուժգնացում՝ 20-25 մ/վրկ, առանձին հատվածներում 27-30մ/վրկ արագությամբ:

Ապրիլի 17-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվում է միայն 2500մ բարձր շրջաններում, Արագած ք/լ-ում կազմել 192սմ:

Շաբաթվա ընթացքում լեռնային և նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը շարունակել է գտնվել երրորդ տերևի և թփակալման փուլերում:

Հովտային շրջաններում սկսվել է բանջարանոցային մշակաբույսերի նախացանքային աշխատանքները, դիտվել է խաղողի վազի բողբոջների ուռչում, տեղ-տեղ առաջացել են առաջին տերևները:

Ապրիլի 11-17-ը հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ: Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում (10.04.22-17.04.2022թթ. տարբերությունը) բարձրացել է 1սմ-ով և կազմել՝ 1900.48մ (17.04.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 22 սմ-ով: